ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27.05.2014թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին Գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը: Նիստը վարում էր մասնաճյուղի գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրենը, բացելով Գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2014-2018 (առկա ուսուցման) և 2014-2019 (հեռակա ուսուցման) ուստարիների ուսումնական պլանների հաստատումը

Զեկուցող՝ Ա. Յ. Դավթյան

2. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողով կազմելու մասին

Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում

Զեկուցող՝ Հ. Ս. Վանյան

4. Ընթացիկ հարցեր

Զեկուցող՝ Մ. Ս. Աթոյան

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լ.ՄԵՅԻՆ. - «ԵՊՀ ԻՄ-ի 2014-2018 (առկա ուսուցման) և 2014-2019 (հեռակա ուսուցման) ուստարիների ուսումնական պլանների հաստատումը» հարցի կապակցությամբ Ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Դավթյանի զեկուցումը: Նշվեց, որ ԵՊՀ

ուսումնական պլանները կազմվել են՝ հաշվի առնելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության առաջադրած խնդիրները, արտաքին շահակիցների պահանջարկը և ԵՊՀ ԻՄ-ի հնարավորությունները: Պարզաբանելով և հիմնավորելով Գիտական խորհրդի անդամների հարցերը՝ կապված ուսումնական պլանների հետ, առաջարկվեց հաստատել այն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - տնօրեն Ս. Ա. Առաքելյանը և այլք: Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2014-2018 (առկա ուսուցման) և 2014-2019 (հեռակա ուսուցման) ուստարիների ուսումնական պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2014-2018 (առկա ուսուցման) և 2014-2019 (հեռակա ուսուցման) ուստարիների ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ. - «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողով կազմելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի զեկուցումը: Նա, կարևորելով գործող Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի դերը ԵՊՀ ԻՄ-ում, առաջարկեց կազմել մրցութային մշտական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Աթոյան Միհր Սերգեյի, Գիտական խորհրդի քարտուղար,

Անդամներ՝ Գրիգորյան Նաթելլա Սերյոժայի, տնօրենի օգնական
Գալստյան Վեներա Յուրիկի, ԱԿԲ-ի կադրերի գծով մասնագետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - տնօրենության մի շարք անդամներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծել Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողով (նախագահ՝ Գիտական խորհրդի քարտուղար Մ. Ս. Աթոյան, անդամներ՝ տնօրենի օգնական Ն. Ս. Գրիգորյան, ԱԿԲ-ի կադրերի գծով մասնագետ Վ. Յ. Գալստյան):

ԼՍԵՑԻՆ. - «ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ-ի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու Հասմիկ Վանյանի զեկուցումը: Նա, ներկայացնելով տվյալ նախագծի առավելությունները, առաջարկեց հաստատել այն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Ա. Մարգարյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը և այլք: Ելույթ ունեցողները դրական արտահայտվեցին ներկայացվող նախագծի կապակցությամբ և առաջարկեցին առանց փոփոխությունների հաստատել ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ.

3. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ. - «Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., ԵՊՀ ԻՄ-ի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու Հ. Վանյանի՝ «Ավետիք Իսահակյանի չափածո և արձակ լեգենդները» վերնագրով գիրքը հրատարակության երաշխավորելու մասին» հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը,

ՈՐՈՇԵՑԻՆ.

4. Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., ԵՊՀ ԻՄ-ի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու Հ. Վանյանի՝ «Ավետիք Իսահակյանի չափածո և արձակ լեգենդները» վերնագրով գիրքը երաշխավորել հրատարակության:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

27.05.2014թ.